# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025թ. հունիսի 10-ին կնքված N ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03-2 ծածկագրով պայմանագրում 2025թ. հուլիսի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունիսի 10-ին կնքված N ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03-2 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Պրիմա Լաբ» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունիսի 10-ին կնքված N ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03-2 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի 2-րդ, 12-րդ չափաբաժինների մասով ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ.

2-րդ չափաբաժնի մասով. «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 70 օրացուցային օրվա ընթացքում (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում)»,

12-14-րդ չափաբաժնի մասով. «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 90 օրացուցային օրվա ընթացքում (բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում)»:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետերի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ**